ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ, Փամբակ համայնքի սիրելի բնակիչներ, ավարտին է մոտենում 2024 թվականը՝ անցյալում թողնելով բոլոր դժվարություններն ու մարտահրավերները, որոնք մեզ դարձրին ավելի տոկուն և շրջահայաց:

Դասեր քաղելով անցյալի բացթողումներից՝ կարողացանք մեկ քայլով մոտենալ մեր երազած իրականությանը, մեր սպասումները դարձան առավել շոշափելի:

Համախմբված միևնույն գաղափարի շուրջ՝ մենք կարողացանք մեր ջանքերն ուղղել մեր պետականության կայունացմանն ու զորեղացմանը՝ ի շահ յուրաքանչյուր բնակչի բարեկեցության:

Սիրելի՛ բնակիչներ, համայնքի զարգացման գործում անուրանալի է ձեզնից յուրաքանչյուրի ներդրումը: Ձեր պատրաստակամության շնորհիվ է, որ մենք կարողանում ենք զարկ տալ այնպիսի ծրագրերի, որոնք պահանջում են մարդկային մեծ ռեսուրսներ ու ներդրումներ:

Սիրելի՛ բնակիչներ, թող գալիք տարին բոլորիդ ընտանիքները լցնի սիրով ու ջերմությամբ, ձեր բոլոր գործերը կյանքի կոչվեն խաղաղության մեջ և ծառայեն ի նպաստ հայրենիքի ու հայ ժողովրդի:

Շնորհավոր գալիք 2025 թվական

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան